

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՄԻ ՆՈՐ ՀՈՍԱՆՔ

Զանազան կենսական և կուսակցական խնդիրների պատճառով լրագրութիւնը երեմն պատշաճաւոր գոյն չէ տալիս մեր կեանքի բոլոր երևոյթներին. բայց մի հանգամանք, որ ընդհանուր է և անսուտ, որի դէմ միշտ բողոք է բարձել պարբերական մամուլը, ալդ այն տը-խուր երևոյթներն են, որոնք անբաժան են տգիտութեան և թերուսութեան, նորա հետևանքն ու բնական քերքն են:

Այդ երևոյթներից մէկն է և եկեղեցականների կը թութեան գործը, որի վրայ մենք հրաւիրել էինք ընթերցողների ուշադրութիւնը մեր հանդիսի Ա. գրքում «քահանաների նիւթական ապահովութեան խնդիրը» վերնագրով յօդուածի մէջ։ Այդ խնդիրը ժամանակակից տաք և առաջաւոր խնդիրներից մէկն է եղել և միշտ բողոքաւոր ձայն բարձրացրել տգէտ եկեղեցականութեան դէմ։

Սակայն չի կարելի ասել, թէ այս խնդրումն էլ մամուլը չափազանցութիւնների լեռները չի բարձրացել, նա յաճախ ոտնհարելով տգէտ հովիւներին՝ կուսակցական հաշիւներով ուսեալների լիշտակութիւնը մոռացել է կամ տգէտ շըջանից ոմանց գիտութեան տաճարի գաւիթն է դրել, որով և կորցրել է լրագրական ձայնի ազդեցութիւնն ընթերցողների աչքում։

Որքան և մուալլ ու ամպոտ է եկեղեցական կեան-
քի հորիզոնը, այնու ամենալին մենք պարզ կերպով
նկատում ենք, որ հետզհետէ երևում են մանը ու խո-
շոր աստղեր, որոնք եկեղեցին վարագուբող ամպերից
շեշտակի անցնելով՝ սկսում են շողալ հալ եկեղեցու
բարձունքում:

Եկեղեցականների կրթութեան հոգսը, որ ամեն մի
ճշմարիտ հալի սրտին մօտիկ է և գուցէ միայն բողոք
արծարծող և ուրիշ ոչինչ, աւելի բուռն կերպով ճնշել
է Ազգիս Վեհափառ Հալրապետին և նա ալդ խնդիրը
իւր հոգածութեանց լաւագոլն խնդիրներից մէկն է
դարձրել: Ալդ նպատակով նորին Սրբութիւնը Մալը Ա-
թոռի Հոգեոր ծեմարանից, որի գերը մեր կեանքի մէջ
միայն արժանաւոր եկեղեցականներ պատրաստելն է,
անպակաս է արել իւր խնամքը, ջանացել է հետզհետէ
բարձրացնել նորա բարոլական և մտաւոր մակերեսովթը
և ծեմարանի սաներից պսակ հիւսել Մալը Տաճարի շուր-
ջը, ջանալով եկեղեցու դուռը փակել տգէտ ալրի քա-
հանաների, թերուս և ոչ ցանկալի կրթութիւն ստացողնե-
րի առաջ, որոնք պղտոր հոսանքով միշտ խուժել են
դէպի եկեղեցին վեղարաւոր աւերիչ դառնալու:

Բայց Վեհափառ Հալրապետի հոգսը դորանով չվերջա-
ցաւ. աչքի առաջ ունենալով, որ ազգալին և եկեղեցա-
կան դաստիարակութեան հետ անհրաժեշտ է և օտար
ու ընդհանուր գիտութիւն, հաճել է ծեմարանաւարտ
վարդապետներին պետական և օտար համալսարաններն
ուղարկել առաւել ևս կատարելագործուելու և վաստա-
կաւոր մշակ դառնալու հալ եկեղեցու համար:

ծեմարանի լաւերժալիշտակ հիմնադիրը ծեմարա-
նի պտուղները չվալելած հող իջաւ, բարելիշտակ Մա-
կար կաթուղիկոսը նոյն կարօտով գերեզման պիտի մըտ-
նէր անշուշտ, եթէ ծեմարանի աշակերտութեան առաջ

մի անձնուրաց մարդ կենդանի օրինակ չտար. Ճեմարանի տեսուչը ամեն ինչ թողած կրօնաւորի խարազն հագաւ և իւր ետևից Մալք Աթոռի գաւիթ հրաւիրեց իւր ընտրեալ աշակերտներին, առանց թմբուկ զարկելու, լուռ և գործոն ու կենդանի օրինակով. իսկ այդ անձնազոհութիւնը նուիրագործեց հանգ. Հայրապետը այդ նախընծայ կրօնաւորներից երկուսին ուղարկելով արտասահման կատարելագործուելու: Արդի Վեհ. Հայրապետը, որ միշտ հետևող և սիրահար է եղել լուսի և գիտութեան, առաւել բուռն ցանկութեան ապացուց տուաւ իւր լիշեալ կարգադրութեամբ:

Արդ՝ կարող ենք աւետել մեր ընթերցողներին, որ նոցանից Հ. Հ. Ցուսիկ և Կոմիտաս վարդապետներն արգէն մեկնել են արտասահման, Հ. Բենիկ վարդապետն Օդէսա, իսկ Հ. Եզնիկ վարդապետը Մոսկուա՝ տեղական համալսարաններում լսելու համար:

Իսկ ճեմարանի սաներից եօթ հոգի Վեհ. Հայրապետի բարձր հաճութեամբ արդէն ուրար են ստացել և մօտերումս սարկաւագ պիտի ձեռնադրութին:

Այս գեղեցիկ ձեռնարկութեան առաջ ոսկեղէն յուսերով է լցւում խորհող մարդու սիրտը:

† ՅՈՎՀԵՆՆԵՍ ԽԵԶՈՒՄԵԱՆ

Գրականութեան անձնուէր մշակներն այնքան սակաւաթիւ են մեզանում, որ եղածների վերալ ուրախանում ենք, իսկ նոցանից որևէ է մէկի կորուստը դառնապէս ողբում:

Այսօր մենք ողբում ենք մի նորաբոյս և վաղաթառամ գարնան ծաղիկ, մի անձնուրաց հայրենասէր. ողբում ենք մի կորովի կեանքի կորուստ, որ գեղեցիկ ապագալ էր խոստանում մեզ: Դա Լայպցիգի հա-